# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1596

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով,ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Փոխել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Շիրակացի փողոցի հարևանությամբ գտնվող 0.0120հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Շիրակացի փողոցի հարևանությամբ գտնվող հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ա.Շիրակացու փողոց, 2/17 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1597

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԻՐԻ ՓՈՂՈՑ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԳՐԱՏԻՈՆ ԷԴՈՒԱՐԴԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բագրատիոն Էդուարդի Դարբինյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09122021-06-0071 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման N1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Համապատասխանեցնել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց 2 հասցեում գտնվող, Բագրատիոն Էդուարդի Դարբինյանին սեփականության իրավունքով պատկանող 0.57795հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից՝ բնակավայրերի հողերի, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի՝ համաձայն Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի:

2.Համապատասխանեցնել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց 2 հասցեում գտնվող, Բագրատիոն Էդուարդի Դարբինյանին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր 3195,1քմ մակերեսով շինությունների նպատակային նշանակությունը՝ արտադրականից՝ որպես հասարակական գործառնական նշանակությամբ շինություններ:

3.Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց 2 հասցեում գտնվող, Բագրատիոն Էդուարդի Դարբինյանին սեփականության իրավունքով պատկանող 0.57795հա

մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

4.Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց 2 հասցեում գտնվող, Բագրատիոն Էդուարդի Դարբինյանին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր 3195,1քմ մակերեսով շինությունների նպատակային նշանակությունը՝ հասարակականից՝ որպես բնակելի գործառնական նշանակությամբ շինություններ՝ բնակելի տուն:

5.Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանում է Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծին և բավարարում է ՀՀ կառավարության 02.04.2015թ.-ի թիվ 412-Ն որոշման 1-ին կետի ը. ենթակետի պահանջներին և ենթակա է գրանցման որպես բնակավայրերի նպատակային նշանակության՝ գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման հողամաս:

6.Շինությունների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

7.Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց 2 հասցեում գտնվող արտադրական բազային տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Նաիրիի փողոց, 2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1598

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ.ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 10/20-2 ՀԱՍՑԵԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /174383/ քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^{3}$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Փոխել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Գ.Նարեկացու փողոց թիվ 10/20-2 հասցեի հյուսիսային մասում գտնվող 0.001885հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Գ. Նարեկացու փողոց, 10/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ　　　　Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1599

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՓՈՂ ԹԻՎ 10Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԼԱՎԴԻՅԱ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կլավդիյա Ալեքսանդրի Կոստանդյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1903920 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի թիվ ՄՏ-01072024-06-0196 միասնական տեղեկանքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման N1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ մասով՝ ***որոշում եմ.***

Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Սանկտ-Պետերբուրգի փող թիվ 10բ հասցեում գտնվող 0.0149հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի խառը կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1600

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 30 ԱՊՐԻԼԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1007 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 30 ապրիլի 2024 թվականի թիվ 1007 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 30 ապրիլի 2024 թվականի «Վանաձոր համայնք գյուղ Գուգարք 2-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 2 հասցեում գտնվող, Արծվիկ Աղասու Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինություններն օրինականացնելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1007 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման 1-ին կետում «229,4» թվերը փոխարինել «275,9» թվերով:

2.Որոշման 2-րդ կետում «229,4քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար՝ 326200 (երեք հարյուր քսանվեց հազար երկու հարյուր) դրամ» բառերը փոխարինել «275,9քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար՝ 392330 (երեք հարյուր իննսուներկու հազար երեք հարյուր երեսուն) դրամ» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1601

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 98 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովսեփ Ավետիսի Յարալյանի (ծնված՝ 21.08.1966թ.) լիազորված անձ Օվաննա Վարդանի Յարալյանի դիմումը, 29.03.2023թ. տրված թիվ 1498 (նոտարական ակտի կոդ: 594-20230329-90-6793341) լիազորագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի 24.05.2024 թվականի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-24052024-06-0081 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հունվարի 2024 թվականի թիվ 98 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հունվարի 2024 թվականի «Վանաձոր քաղաքի Ճավճավաձե փող. թիվ 1 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Հովսեփ Ավետիսի Յարալյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 98 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.Որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «2. Ճանաչել Հովսեփ Ավետիսի Յարալյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ճավճավաձե փող. թիվ 1 հասցեի 217.8քմ (435.6:2, 203.0:2+232.6:2) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ(համաձայն շինությունների բնութագրի):» :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1602

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 101 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սյուզաննա Հենրիկի Յարալյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հունվարի 2024 թվականի թիվ 101 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 24.05.2024թ. թիվ Կ-24052024-06-0078 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հունվարի 2024 թվականի «Վանաձոր քաղաքի Ճավճավաձե փող. թիվ 1 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Արաքսյա Հակոբի Յարալյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 101 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը .

1.Որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2.Ճանաչել Արաքսյա Հակոբի Յարալյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ճավճավաձե փող. թիվ 1 հասցեի 217.8քմ (435.6:2, 203.0:2+232.6:2) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ(համաձայն շինությունների բնութագրի). բացառությամբ՝ 15.05.2001թ. հետո կառուցված 10.35քմ օժանդակ շինության և 5.83քմ ծածկի:»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ   Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1603

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐՄԵՆԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անդրանիկ Արմենի Իսրայելյանի 22.05.2023թ. թիվ 8256 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24062024-06-0076 վկայականը, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր քաղաքի Հ. Մաթևոսյան փողոց 8/10 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 26.12քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 24.48քմ) ավտոտնակը 98500 (իննսունութ հազար հինգ հարյուր) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 26.12քմ մակերեսով հողամասը 650100 (վեց հարյուր հիսուն հազար հարյուր) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Անդրանիկ Արմենի Իսրայելյանին:

2.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Անդրանիկ Արմենի Իսրայելյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1604

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂՅՈՒՍԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 37 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՒՍԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԹԵՐՋՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսան Հարությունի Թերզյանի (ծնված՝ 03.07.1954թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 24.11.2023թ. տրված թիվ 6778 (նոտարական ակտի կոդ: 741-20231124-88-7499192), 29.11.2023թ. տրված թիվ 6895 (նոտարական ակտի կոդ: 594-20231129-66-7510506) և թիվ 6897 (նոտարական ակտի կոդ: 594-20231129-66-7510626) հայտարարությունները, 13.06.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-207/24 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Աղյուսագործների փողոց թիվ 37 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 396.8քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1960-1996թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 396.8քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1960թ.-ից:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Սուսան Հարությունի Թերզյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Աղյուսագործների փողոց թիվ 37 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 396.8քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3.Վանաձոր քաղաքի Աղյուսագործների փողոց թիվ 37 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Աղյուսագործների փողոց, թիվ 37/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1605

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻԻ ՓՈՂՈՑ 28Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱԻԴԱ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աիդա Ալեքսանդրի Մելիքյանի դիմումները, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 26082022-06-0031 վկայականը,անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 26.08.2022թ. ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ թիվ ԱՏ-26082022-06-0586 տեղեկանքը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման N1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Բաթումիի փողոց 28բ հասցեում գտնվող, Աիդա Ալեքսանդրի Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող 0.31794հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2.Համապատասխանեցնել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց 28բ հասցեում գտնվող, Աիդա Ալեքսանդրի Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող 0.31794հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի հողերից՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողերից՝

արդյունաբերական օբյեկտների հողերի՝ համաձայն Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի:

3 Համապատասխանեցնել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց 28բ հասցեում գտնվող, Աիդա Ալեքսանդրի Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող 1028.94քմ մակերեսով շինության նպատակային նշանակությունը՝ որպես արտադրական գործառնական նշանակությամբ շինություն:

4.Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանում է Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծին և բավարարում է ՀՀ կառավարության 02.04.2015թ.-ի թիվ 412-Ն որոշման 1-ին կետի ը. ենթակետի պահանջներին և ենթակա է գրանցման որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության՝ գործառնական նշանակությունը արդյունաբերական օբյեկտների հողամաս:

5.Շինությունների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

6.Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Բաթումիի փողոց թիվ 28բ հասցեին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Բաթումիի փողոց, 28/2 արտադրամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1606

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂՈՑ 28Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱԻԴԱ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աիդա Ալեքսանդրի Մելիքյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1741856 վկայականը, անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման N1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց 28ա արտադրամաս հասցեում գտնվող Աիդա Ալեքսանդրի Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող 0.14623հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2.Համապատասխանեցնել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց 28ա հասցեում գտնվող, Աիդա Ալեքսանդրի Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող 0.14623հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի հողերից՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի, գործառնական նշանակությունը՝ արտադրամասի սպասարկման հողերից՝ արդյունաբերական օբյեկտների հողերի՝ համաձայն Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի:

3.Համապատասխանեցնել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց 28ա հասցեում գտնվող, Աիդա Ալեքսանդրի Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող 1205.5քմ մակերեսով շինության նպատակային նշանակությունը՝ որպես արտադրական գործառնական նշանակությամբ շինություն:

4.Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանում է Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծին և բավարում է ՀՀ կառավարության 02.04.2015թ.-ի թիվ 412-Ն որոշման 1-ին կետի ը. ենթակետի պահանջներին և ենթակա է գրանցման որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության՝ գործառնական նշանակությունը արդյունաբերական օբյեկտների հողամաս:

5.Շինությունների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

6.Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց 28ա արտադրամաս հասցեին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Բաթումիի փողոց, 28/3 արտադրամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԻԼԵՑՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1607

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 12/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՐԲՈՒՀԻ ՀԵՆԶԵԼԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սրբուհի Հենզելի Վարդանյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31052024-06-0048 և Սրբուհի Հենզելի Վարդանյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28042022-06-0019 վկայականները, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 47 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, 12.04.2022թ. «ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» 93-Ն ՀՀ օրենքով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Վ. Տերյան փողոց թիվ 12/1 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 28.6քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31052024-06-0048 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 462660 (չորս հարյուր վաթսուներկու հազար վեց հարյուր վաթսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով, սեփականության իրավունքով օտարել Սրբուհի Հենզելի Վարդանյանին՝ հողամասի ընդլայնման նպատակով:

2.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Սրբուհի Հենզելի Վարդանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 28.6քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1608

### ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱԿՈԲ ՀՐԱՆՏԻ ՍԵՓԽԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՄՎԵԼ ԱՐՄԵՆԻ ՆԱԶԼՈՒԽԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հակոբ Հրանտի Սեփխանյանի և Սամվել Արմենի Նազլուխանյանի դիմումը, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 47 որոշումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27062024-06-0114 և Հակոբ Հրանտի Սեփխանյանի(1/2) և Սամվել Արմենի Նազլուխանյանի(1/2) անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13052024-06-0043 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

1.Համայնք Վանաձոր Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց 8/1 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 264.4քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27062024-06-0114 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 2779850 (երկու միլիոն յոթ հարյուր յոթանասունինը հազար ութ հարյուր հիսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Հակոբ Հրանտի Սեփխանյանին(1/2) և Սամվել Արմենի Նազլուխանյանին(1/2)՝ գրասենյակի ընդլայնման նպատակով (ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով):

2.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Հակոբ Հրանտի Սեփխանյանի և Սամվել Արմենի Նազլուխանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 264.4քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1609

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ՝ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹԵՎՈՍՅԱՆ-2 ԱՌԱՆՁԻՆ ՄԻԿՐՈՇՐՋԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 2/5-2 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԵՏԱ ՄԱՐՏՈՒՆԻ ԱՎԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անետա Մարտունի Ավետյանի (ծնված՝ 05.01.1961թ.) 18.07.2023թ. թիվ 02/12109 դիմումը, Վանաձոր համայնքի ավագանու 26.04.2023թ. թիվ 30 և թիվ 35 որոշումները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /138179/, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 01.04.2019թ. տրված՝ թիվ 836 (նոտարական ակտի կոդ: 843-20190401-88-3701573) հայտարարությունը, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 05.10.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-334/23 Ի եզրակացությունը, 25.07.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտեի տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20239YW5FQ), ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝ Վանաձոր քաղաքի Թևոսյան-2 առանձին միկրոշրջանում գտնվող Թևոսյան փողոց, 2/5-2 (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 400.0քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1989թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 400.0քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1992թ.-ից: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 9-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ մասերով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն, 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշումները, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Փոխել Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝Վանաձոր քաղաքի Թևոսյան-2 առանձին միկրոշրջանում գտնվող Թևոսյան փողոց, 2/5-2 (պայմանական) հասցեի 0.04հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողերից բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի՝ համաձայն Վանաձոր համայնքի ավագանու 26.04.2023թ. թիվ 35 որոշման:

2.Ճանաչել Անետա Մարտունի Ավետյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝Վանաձոր քաղաքի Թևոսյան-2 առանձին միկրոշրջանում գտնվող Թևոսյան փողոց, 2/5-2 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 400.0քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և Վանաձոր համայնքի ավագանու 26.04.2023թ. թիվ 30 որոշումով:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Թևոսյան փողոց, 2/23 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԻԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1610

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԲԵՂՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՅԻԿ ՍՏԵՓԱՆԻ ԽԱՌԱՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արայիկ Ստեփանի Խառատյանի դիմումը, 03.03.1994թ. տրված անհատական բնակելի տան սեփականության վկայագիրը, 01.04.2024թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1852 (նոտարական ակտի կոդ: 594-20240323-84-7803722) վկայագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 06.06.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-198/24 Ի եզրակացությունը, ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Աբեղյան փողոց թիվ 26 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 380.7քմ մակերեսով հողամասը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1959-1995թ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 380.7քմ :

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Արայիկ Ստեփանի Խառատյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Աբեղյան փողոց թիվ 26 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 380.7քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2.Ճանաչել Արայիկ Ստեփանի Խառատյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Աբեղյան փողոց թիվ 26 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 380.7քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք.,Մ. Աբեղյան փողոց թիվ 26 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1611

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՖԻԴԱՅԻՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմինե Մելիքի Ափինյանի 23.05.2023 թվականի թիվ 02/8288 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը,հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Արսեն Իսահակյան Ռուդիկ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 02.06.2023 թվականի հաշվառման/չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանք /ծածկագիր: 2023SPCTZH/, 18.06.2024 թվականին «Վանաձորի Նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1 - 211/24 Ի եզրակացությունը, 29.11.2023 թվականի Վանաձորի համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ֆիդայիների փողոցի հարավային մասում ինքնակամ կառուցված,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 178.53 քմ արտաքին մակերեսով /ներքին մակերեսը 164.48 քմ/ կիսակառույց բնակելի տան և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.045045 քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված

կիսակառույց բնակելի տան և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին կիսակառույց բնակլի տան և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5.Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ֆիդայիների փողոց հարավային մասում գտնվող կիսակառույց բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք.,Ֆիդայիների փողոց 2/1 կիսակառույց բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա ՓԱԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1612

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 17 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՇՈՏ ԼԵՎՈՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԵՎ ԱՐԱՄ ԼԵՎՈՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Լևոնի Հովսեփյանի և Արամ Լևոնի Հովսեփյանի դիմումը, 28.10.1987թ. տրված տեխնիկական անձնագիրը, 13.12.2023թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 7670 (նոտարական ակտի կոդ: 843-20231213-84-7548302) և թիվ 7668 (նոտարական ակտի կոդ: 843-20231213-84-7548070) վկայագրերը, «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 19.12.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտեի տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023A6ENFK), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 21.05.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-185/24 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 17 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 171.8քմ հողամասին կից 165.3քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1987-2002թթ-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 337.1քմ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Աշոտ Լևոնի Հովսեփյանի(1/2) և Արամ Լևոնի Հովսեփյանի(1/2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 17 հասցեի

բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 171.8քմ մակերեսով հողամասին կից 165.3քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Ճանաչել Աշոտ Լևոնի Հովսեփյանի(1/2) և Արամ Լևոնի Հովսեփյանի(1/2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 17 հասցեի 337.1քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ. բացառությամբ 2002թ. կառուցված 56.0քմ բնակելի տան, 1.90քմ պարսպի և 33.40քմ հարթակի:

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 17 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք.,Ղ.Աղայան փողոց թիվ 17/4 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1613

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ ՇԵՆՔ 6, ԹԻՎ 6 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼՈՒՄ ԵՎ ԾԱՎԱԼԻՑ ԴՈՒՐՍ ՇԵՆՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՏՈՒՄ ՆԵԼԼԻ ՌՈԲԵՐՏԻ ՁԱԼՅԱՆԻ, ԱՐԹՈՒՐ ՍԱՆԱՍԱՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ,ՍԱՆԱՍԱՐ ԱՐԹՈՒՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ԼԻԼԻԹ ԱՐԹՈՒՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԵՎ Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ 6 ՇԵՆՔԻ , Գ. ՆԺԴԵՀ ՓՈՂՈՑ ՇԵՆՔ 6 ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Սանասարի Հարությունյանի, Նելլի Ռոբերտի Ձալյանի, Լիլիթ Արթուրի Հարությունյանի և Սանասար Արթուրի Հարությունյանի 26.12.2023 թվականի թիվ 02/23167 դիմումի, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03092012-06-0212 վկայականը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 22.03.2024 թ տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-125/24 ի եզրակացությունը, «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը,28.03.2024 թվականի հարևանների հայտարարությունը ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 14.12.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023PXFKKC), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 27-րդ, 28-րդ, 31-րդ կետերով, 32-րդ կետի բ) և գ) ենթակետերով և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել օրինական Արթուր Սանասարի Հարությունյանի,Նելլի Ռոբերտի Ձալյանի, Լիլիթ Արթուրի Հարությունյանի, Սանասար Արթուրի Հարությունյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Գ. Նժդեհի փողոց 6 շենքի ծավալում շենքի սպասարկման գոտում, թիվ 6 բնակարանին կից 8.58 քմ արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված բնակարանը (ներքին մակերեսը՝ 8.56քմ մակերեսով բնակարան) և Գ. Նժդեհի թիվ 6 շենքի շենքի ծավալից դուրս թիվ 6 բնակարանին կից 4.66 քմ արտաքին մակերեսով բաց

պատշգամբ/ ներքին մակերես 4.12 քմ մակերեսով բաց պատշգամբ/ Գ. Նժդեհի թիվ 6 շենքի թիվ 6 բնակարանում կատարված թվով 2 ինքնակամ ձևափոխումը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 8.58 քմ ընդհանուր արտաքին (ներքին մակերեսը՝ 8.56 քմ բնակարան) մակերեսով ինքնակամ կառուցված բնակարանի օրինականացման համար սահմանված վճարը 64711 (վաթսունչորս հազար յոթ հարյուր տասնմեկ) ՀՀդրամ, 4.66 քմ արտաքին մակերեսով /ներքին մակերես՝ 4.12 քմ բաց պատշգամբ/ բաց պատշգամբի օրինականացման համար սահմանված վճարը՝ 5272 (հինգ հազար երկու հարյուր յոթանասուն մեկ) ՀՀ դրամ և թվով 2 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 7542 (յոթ հազար հինգ հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Մ. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1614

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 7Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԱԼԻՍԱ ԱՐԱՄԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ, ՊԱՅՄԱՄԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալիսա Արամի Հովհաննիսյանի 24.05.2024 թվականի թիվ 9287 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1224540 վկայականը, Վանաձորի քաղաքապետի 07.05.2004 թվականի թիվ 506 որոշումը, 01.07.2004 հողատարածքի վարձակալության թիվ 241 պայմանագիրը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 14 մայիսի 2015 թվականի թիվ 588-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 7բ հասցեում գտնվող 22.8քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2034 թվականի հունիսի 30-ը:

2.Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Ալիսա Արամի Հովհաննիսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 32.0քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի չափը փոխելու և վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր, վարձավճարի չափը 1.0քմ մակերեսով հողամասի համար սահմանելով տարեկան 24 /քսանչորս/ դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3.Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 7բ հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տիգրան Մեծի պողոտա, 7/9 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1615

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍՈՒԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 60 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՎԵՏԼԱՆԱ ՍՈՒՐԵՆԻ ԽԱՌԱՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սվետլանա Սուրենի Խառատյանի դիմումը, 14.12.1958թ. տրված գույքային թերթը, 03.05.2024թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3024 (նոտարական ակտի կոդ: 763-20240502-84-7910624) վկայագիրը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 12.06.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-206/24 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Սուդուկյան փողոց թիվ 60 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 350.0քմ հողամասին կից 2.95քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1958-1990թթ-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 357.95քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Սվետլանա Սուրենի Խառատյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Սուդուկյան փողոց թիվ 60 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 350.0քմ մակերեսով հողամասին կից 2.95քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2.Ճանաչել Սվետլանա Սուրենի Խառատյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Սուդուկյան փողոց թիվ 60 հասցեի 357.95քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4.Վանաձոր քաղաքի Սուդուկյան փողոց թիվ 60 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Սուդուկյան փողոց թիվ 60/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԻԼԻԲՅԱՆ

2024թ. հուլիսի 15

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2024 թվականի N 1616

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 17.06.2027Թ. ԹԻՎ 1347 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարինե Կոլյայի Վարդանյանի 06.03.2024թ. թիվ 02/4702 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 14.06.2024թ. «ՌԻԳ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ 69-18830 եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 25.12.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023GCVHB), 13.05.2024 թվականի Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ա.Իսահակյանի փողոցի արևմտյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 33.7քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 23.7քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 33.7քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման,

հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ:

5.Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ա. Իսահակյանի փողոցի արևմտյան մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Ա. Իսահակյան փողոց, 25/1 ավտոտնակ:

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաք Ներսիսյան նրբանցք թիվ 5 շենքի բակում ինքնակամ կառուցված,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 27.41քմ մակերեսով (ներքին մակերես՝ 22.14քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 27.41քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի

նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5.Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ներսիսյան նրբանցք թիվ 5 շենքի բակում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Հ. Ներսիսյան փողոց, 1-ին նրբանցք, 5/21 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2024 թվականի N 1625

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՆՁՈՐՈՒՏ ԹԱՂԱՄԱՍԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 23 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌԱՖԱՅԵԼ ՍԱՄՎԵԼԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆայել Սամվելի Դարբինյանի (ծնված՝ 04.07.1992թ.) լիազորված անձ Սպարտակ Սամվելի Դարբինյանի (ծնված՝ 29.09.1990թ.) 22.12.2023թ. թիվ 02/22946 դիմումը, 19.04.1971թ. տրված գույքային թերթը, 20.03.2023թ. տրված թիվ 1453 (նոտարական ակտի կոդ: 763-20230320-90-6766727) լիազորագիրը, 12.09.2018թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4186 (նոտարական ակտի կոդ: 763-20180909-84-2975631) և 20.03.2023թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1452 (նոտարական ակտի կոդ: 763-20230319-84-6765002) վկայագրերը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 15.11.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023SPG6D3), հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 25.06.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ ՎՆ 1- 213/24 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամասի 5-րդ փողոց թիվ 23 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 400.0քմ և կից 119.6քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1959- 1990թթ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 519.6քմ:

Ղեկավարվելով՝ 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Ռաֆայել Սամվելի Դարբինյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամասի 5-րդ փողոց թիվ 23 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 400.0քմ մակերեսով հողամասին կից 119.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Ճանաչել Ռաֆայել Սամվելի Դարբինյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամասի 5-րդ փողոց թիվ 23 հասցեի 519.6քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Խնձորուտ թաղամասի 5-րդ փողոց, 23 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2024 թվականի N 1626

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔ Կ.ԴԵՄԻՐՃՅԱՆ ԹԻՎ 36-6/26Գ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստիմսոն Թովմասի Խաչատրյանի և Արմեն Ստիմսոնի Խաչատրյանի 30.04.2024թ. թիվ 02/7932 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1508427 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնք ք.Վանաձոր Կ. Դեմիրճյան 36-6/26գ հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 21.3 մակերեսով հողամասը հողի կադաստրային արժեքով՝225750 (երկու հարյուր քսանհինգ հազար յոթ հարյուր հիսուն) դրամով, նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ստիմսոն Թովմասի Խաչատրյանին և Արմեն Ստիմսոնի Խաչատրյանին:

2.Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Ստիմսոն Թովմասի Խաչատրյանի և Արմեն Ստիմսոնի Խաչատրյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 21.3քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3.Կ.Դեմիրճյան 36-6/26գ հասցեում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Կ.Դեմիրճյանի փողոց 6/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ                Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2024 թվականի N 1627

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԱՆՑԱԿԵՏԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալեքսանդր Յուրիի Բաղդասարյանի 10.06.2024 թվականի թիվ 10093 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 1883218 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 10.06.2024 թվականի գույքի առուվաճառքի թիվ 17 պայմանագիրը (նոտարական ակտի կոդ:604-20240610-2-8015940), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Համբարձումյան թիվ 1 հասցեում գտնվող անցակետին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Վ. Համբարձումյան փողոց, 1 շենք, 524 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հուլիսի 2024 թվականի N 1628

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՑԱԿԵՏԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալեքսանդր Յուրիի Բաղդասարյանի 10.06.2024 թվականի թիվ 10092 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 1883219 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 10.06.2024 թվականի գույքի առուվաճառքի թիվ 18 պայմանագիրը (նոտարական ակտի կոդ:604-20240610-2-8015967), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Համբարձումյան թիվ 1 հասցեում գտնվող անցակետին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Վ. Համբարձումյան փողոց, 1 շենք, 523 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2024 թվականի N 1629

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 55 ՇԵՆՔԻ ԹԻՎ 12 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ, ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼԻՑ ԴՈՒՐՍ ՇԵՆՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՏՈՒՄ ՍՈՒՐԵՆ ՄԱՐԱՏԻ ԳԱԼՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԵՎ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 55 ՇԵՆՔԻ ԹԻՎ 12 ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուրեն Մարատի Գալոյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20102016-06-0061 վկայականը, «Կենտրոն» համատիրության նախագահի կողմից տրված տեղեկանքը և արձանագրությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 17.10.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023WWXERY), «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 29.11.2023թ տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-435/23 Ի եզրակացությունը,ը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 27-րդ, 28-րդ, 31-րդ կետերով, 32-րդ կետի բ) և գ) ենթակետերով և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել օրինական Սուրեն Մարատի Գալոյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 55 շենքի ծավալից դուրս, շենքի սպասարկման գոտում, թիվ 12 բնակարանին կից 11.25 քմ արտաքին մակերեսով (ներքինմակերեսը՝ 10.35քմ ) ինքնակամ կառուցված բնակարանը և Տիգրան Մեծի պողոտա թիվ 55 շենքի թիվ 12 բնակարանում կատարված թվով 3 ինքնակամ ձևափոխումը:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված 11.25 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 10.35քմ ) մակերեսով ինքնակամ կառուցված բնակարանի օրինականացման համար սահմանված վճարը 12730 (տասներկու հազար յոթ հարյուր երեսուն) դրամ և թվով 3 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 11320 (տասնմեկ հազար երեք հարյուր քսան) դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հուլիսի 2024 թվականի N1630

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ղ. ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 95/22 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՅՐԱՆ ՎԱԶԳԵՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Վազգենի Մկրտչյանի 28.07.2023թ. թիվ 02/12778 դիմումը, Վանաձոր համայնքի ավագանու 29.11.2023 թվականի թիվ 46 որոշումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18062024-06-0019 և Սեյրան Վազգենի Մկրտչյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14072022-06-0001 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր քաղաքի Ղ. Աղայան փողոց թիվ 95/22 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 52.0քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18062024-06-0019 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 230980 (երկու հարյուր երեսուն հազար ինը հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սեյրան Վազգենի Մկրտչյանին՝ տնտեսական սենյակի և ավտոտնակի ընդլայնման նպատակով:

2.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Սեյրան Վազգենի Մկրտչյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 52.0քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հուլիսի 2024 թվականի N 1631

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՈՐԵՆԱՑՈՒ 7-1-4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հիմք ընդունելով Հովիկ Սերյոժայի Հովակիմյանի 10.06.2024 թվականի թիվ 02/10049 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 02092014-06-0061 վկայականը, Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 04 օգոստոսի 2014 թիվ 1697-Ա որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու քաղվածքը 08.08.2014 թվականի թիվ 141 համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիրը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 28.03.2013թ. թիվ 276-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր քաղաքի Խորենացու 7-1-4 հասցեում գտնվող 0.0021 հա մակերեսով հողամասի վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի չափը փոխել և կառուցապատման իրավունքի պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2034թ.օգոստոսի 4-ը:

2.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Հովիկ Սերյոժայի Հովակիմյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 0.0021 հա մակերեսով հողամասի իրավունքի պայմանագրով սահմանված վարձավճարի չափը փոխելու և կառուցապատման իրավունքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ վարձավճարի չափը 1.0քմ մակերեսով հողամասի համար սահմանելով ամսական 24 (քսանչորս) դրամ: Համայնքի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին, հաշվառել վերոհիշյալ պայմանագիրը:

3.Վանաձոր ք. Մ. Խորենացու փողոց, 7-1-4 հասցեին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր, Վանաձոր. Մ. Խորենացու փողոց, 7/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2024 թվականի N 1632

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ռ. ԲՈՇՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՓԻՆԵ ԱՆԱՏՈԼԻԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արփինե Անատոլիի Մխիթարյանի դիմումը, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 47 որոշումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28062024-06-0031 և Արփինե Անատոլիի Մխիթարյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29092021-06-0045 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

1.Համայնք Վանաձոր Վանաձոր քաղաքի Ռ. Բոշյան փողոց 16 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 103.3քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28062024-06-0031 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 458840 (չորս հարյուր հիսունութ հազար ութ հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արփինե Անատոլիի Մխիթարյանին՝ կիսակառույցի ընդլայնման նպատակով:

2.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Արփինե Անատոլիի Մխիթարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 264.4քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2024 թվականի N 1633

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ 06-001-0344-0026 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի 06-001-0344-0026 ծածկագրով, 0.001739հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Զորյան փողոց , 21/15 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հուլիսի 2024 թվականի N1634

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԻ ԽՃՈՒՂԻ 38 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման N1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի 38 հասցեին կից գտնվող 0.007560հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Շիրակի խճուղի, 38/2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հուլիսի 2024 թվականի N1635

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 16 ՇԵՆՔ, 54 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԻՔԱՅԵԼ ՍԱՆԱՍԱՐԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Միքայել Սանասարի Եղիազարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13032024-06-0067 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով՝ ***որոշում եմ.***

Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 16 շենք, 54 հասցեում գտնվող 108,34քմ մակերեսով գրասենյակի օգտագործման նշանակությունը գրասենյակից՝ խանութի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2024 թվականի N 1636

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏՊԱԳՐԻՉՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Խաչատուրի Դանիելյանի (ծնված՝ 07.05.1965թ.) 06.08.2021 թվականի թիվ 11380 դիմումը, 07.07.2021 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3189 վկայագիրը /Նոտարական ակտի կոդը: 763-20210627-84-5196586/, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 22.03.1988 թվականի տեխնիկական անձնագիրը, 18.01.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-08/24 Ի եզրակացությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 17.12.2023 թվականի հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանք /ծածկագիր: 2023PAFVVC/«Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տպագրիչների փողոց թիվ 26 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 167.30 քմ մակերեսով հողամասին կից 228.4 քմ մակերեսով հողամասերը դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1957-1981 թթ ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 395.7քմ որը գտնվում է ընդհանուր համատեղ օգտագործման տակ 2 միավոր տնատիրությունների միջև:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Արթուր Խաչատուրի Դանիելյանի Տպագրիչների փողոց թիվ 26 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 395.7 քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Ճանաչել Արթուր Խաչատուրի Դանիելյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տպագրիչների փողոց թիվ 26 բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 395.7 քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3.0.03957 հա հողամասը գտնվում է ընդհանուր համատեղ օգտագործման տակ 2 միավոր տնատիրությունների միջև

4.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք.,Տպագրիչների փողոց, 26/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հուլիսի 2024 թվականի N 1637

### ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Ք. ՁԱՔԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ 10-9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՈՐԱՅՐ ԺՈՐԱՅԻ ՉԱՏԻՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նորայր Ժորայի Չատինյանի 09.01.2024 թվականի թիվ 02/358 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31102013-06-0003 վկայականը, Վանաձորի ավագանու13.05.2024թ. թիվ 31 որոշումը և անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ մասի ա) ենթակետով, Վանաձոր համայնքի ավագանու 25 նոյեմբերի 2020 թվականի թիվ 114-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 15-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Համայնք Վանաձոր Վանաձոր քաղաքի Ձաքարյան փողոց 10-9 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող 0.002 հա մակերեսով հողամասը (ավտոտնակ ամրակցման համար), համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31102013-06-0003 վկայականի, կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Նորայր Ժորայի Չատինյանին՝ ավտոտնակ կառուցելու նպատակով:

2.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Նորայր Ժորայի Չատինյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր, 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 24 (քսանչորս) ՀՀ դրամ, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3.Վանաձոր ք. Ձաքարյան փողոց 10-9 հասցեում գտնվող հողամասին տալ նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Հ. Ձաքարյան փողոց 10/9 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2024 թվականի N 1638

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԻ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 15/1 ՇԵՆՔԻ ԴԻՄԱՑԻ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԾԱԾԿԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԾԱԾԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարեկ Արտակի Խառատյանի 14.12.2023 թվականի թիվ 02/22334 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 12.12.2023թ. «ՎԱՆԱՁՈՐԻ ՆԱԽԱԳԾՈՂ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-224/24 Ի եզրակացությունը, 13.12.2023 թ. թվականին տրված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023MRABHN), 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի թիվ 15/1 շենքի դիմացի մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 67.2 քմ մակերեսով ծածկի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.03726 հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված ընդհանուր օգտագործման նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու

մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ծածկի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին՝ ծածկը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի թիվ 15/1 շենքի դիմացի մասում գտնվող ծածկին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի, 15/2 ծածկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2024 թվականի N 1639

## ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՈՎԱԶԴԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 15 մայիսի 2024 թվականի թիվ 1081 որոշումը և ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ ***որոշում եմ.***

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնի պետ Արմեն Ստեփանի Այվազյանին (պաշտոնի ծածկագիր՝ 2.1-10) շնորհել Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հուլիսի 2024 թվականի N 1640

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑ 51/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԻԳՐԱՆ ՌԱՖԻԿԻ ԴԵՐՁՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տիգրան Ռաֆիկի Դերձյանի 12.06.2024 թվականի թիվ 02/10258 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06062024-06-0044 վկայականը,«Արսեն Իսահակյան Ռուդիկ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը շինությունների բնութագիրը և մասնագիտական եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Գ. Լուսավորչի փողոց 51/1 հասցեում գտնվող Տիգրան Ռաֆիկի Դերձյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «Արսեն Իսահակյան Ռուդիկ» ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Գ. Լուսավորչի փողոց 51/1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա.0.071501հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 127.69 քմ մակերեսով բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Գ. Լուսավորչի փողոց, 51/1 բնակելի տուն:

բ. 0.017535 հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 5.72 քմ մակերեսով բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Գ. Լուսավորչի փողոց, 51/4 պարիսպ:

3.Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Գ. Լուսավորչի փողոց, 51/1 , հասցեում գտնվող 5.72 քմ մակերեսով պարիսպի զբաղեցրած 0.017535 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 17

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2024 թվականի N 1641

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08 ՀՈՒԼԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1523 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 08 հուլիսի 2024 թվականի թիվ 1523 որոշումը , անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10102019-06-0036 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 08 հուլիսի 2024 թվականի «Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց, 25-5/5 հասցեում գտնվող հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1523 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1. Որոշման 1-ին կետը «6 քմ մակերեսով» բառերից հետո լրացնել «Նոննա Ֆրիկի Սարգսյանի և Սենիկ Աշոտի Սալազարյանի ընդհանուր բաժնային սեփականությունը հանդիսացող» բառերով:

2 Որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ.

«2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Նոննա Ֆրիկի Սարգսյանի և Սենիկ Աշոտի Սալազարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 30.0քմ մակերեսով հողատարածքի վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի չափը փոփոխելու և պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ վարձավճարի չափը 1 քմ մակերեսով հողամասի համար սահմանելով ամսական 800 (ութ հարյուր) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 17
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2024 թվականի N 1642

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված թիվ 1 հավելվածի 8.4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 18 հուլիսի 2024թ. անցկացվող մրցույթների մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2.Լիազորված անձ նշանակել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հայկ Վիրաբյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 17
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հուլիսի 2024 թվականի N 1643

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված թիվ 1 հավելվածի 8.4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 19 հուլիսի 2024թ. անցկացվող մրցույթների մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2.Լիազորված անձ նշանակել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հայկ Վիրաբյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 18
ք.Վանաձոր

19/07/2024
11:00

*18/07/2024 10:32:56 A*
*Առաջատար պաշտոններ գլխ. մասնագետ (ծածկագրեր՝ ՎՀ-2.3-1, ՎՀ-2.3-2, ՎՀ-2.3-3, ՎՀ-2.3-4, ՎՀ-2.3-5)*

Հավելված թիվ
Վանաձոր համայնքի
ղեկավարի պաշտոնակատարի
«18» հուլիս 2024թ.
թիվ որոշում

1) Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-10)
2) Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-11)
3) Վանաձորի համայնքապետարանի գնումների բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-12)
4) Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-13)
5) Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-14)

# Հանձնաժողովի կազմը

Լուսինե Իվանի Ստեփանյան
*Հաստատությունը՝* Համայնքապետարան
*Պաշտոնը՝* Քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնի պետ

Դավիթ Հակոբյան
*Հաստատությունը՝* Համայնքապետարան
*Պաշտոնը՝* Գնումների բաժնի պետ

Էդգար Հախվերդյան
*Հաստատությունը՝* Մարզպետարան
*Պաշտոնը՝* Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ

Մերի Դալլաքյան
*Հաստատությունը՝* Մարզպետարան
*Պաշտոնը՝* Լոռու մազպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

Կարեն Լևոնի Դավթյան
*Հաստատությունը՝* Գիտական հաստատությունների ներկայացուցիչներ
*Պաշտոնը՝* դասախոս
*Այլ տվյալներ* Եվրոպական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ

Նունե Գագիկի Հովհաննիսյան
*Հաստատությունը՝* Անկախ
*Պաշտոնը՝* ՔՊ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՓԵԼԵՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հուլիսի 2024 թվականի N 1644

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԾԱՎԺԱՎԱԶԵ ՓՈՂՈՑ ԹԻՎ 13 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԼԵՏ ՇՄԱՎՈՆԻ ՂԱԼԱՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համլետ Շմավոնի Ղալայանի (ծնված՝ 25.09.1947թ.) դիմումը, 16.08.1995թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, 06.11.2023թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 9078 (Նոտարական ակտի կոդ: 763-20231106-84-7448447) վկայագիրը, «ՌԻԳ» ՍՊԸ-ի կողմից 09.04.2024թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ 34-18830 եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի 22.12.2023թ. հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023ZEBLLR), ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով՝ այն, որ Վանաձոր քաղաքի Ծավծավաձե փողոց թիվ 13 հասցեում կառուցած բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 399.9քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1980-1991թթ.-ին, դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 399.9քմ :

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Համլետ Շմավոնի Ղալայանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ծավծավաձե փողոց թիվ 13 հասցեում գտնվող անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 399.9քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Ճանաչել Համլետ Շմավոնի Ղալյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ճավճավաձե փողոց թիվ 13 հասցեում գտնվող 399.9քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Վանաձոր քաղաքի Ճավճավաձե փողոց թիվ 13 հասցեի բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, ք. Վանաձոր, Ի. Ճավճավաձեի փողոց, թիվ 13/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հուլիսի 2024 թվականի N1645

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՆԱՐԻՆԵ ԽԱԼԱՖՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ՆԱՐԻՆԵ ԽԱԼԱՖՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿԻ» 2024 թվականի հուլիսի 18-ի թիվ 01/12290 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1.Բավարարել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Վարդանանց փող. թիվ 45-1/2 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ՆԱՐԻՆԵ ԽԱԼԱՖՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Վարդանանց փող. թիվ 45-1/2 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 19
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հուլիսի 2024 թվականի N 1646

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10 ԱՊՐԻԼԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 895 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12 ՀՈՒՆԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1304 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լիլիթ Աշոտի Դերձյանի 13.09.2023թ. թիվ 02/15690 դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 10 ապրիլի 2024 թվականի թիվ 895 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 18.06.2024թ. թիվ Կ-18062024-06-0205 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 10 ապրիլի 2024 թվականի «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 74 հասցեին կից ինքնակամ կառուցված տնտեսական շինության և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչելու, տնտեսական շինությանը օրինականացնելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 895 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ.
«Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 74 հասցեին կից ինքնակամ կառուցված անավարտ շինության (կիսակառույց) և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչելու, անավարտ շինությունը (կիսակառույց) օրինականացնելու և փոստային հասցե տրամադրելու մասին»:
2.Որոշման բովանդակության 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում՝ «տնտեսական շինություն» բառերը իր հոլովաձևերով փոխարինել՝ «անավարտ շինություն (կիսակառույց)» բառերով:
3.Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 12 հունիսի 2024 թվականի «Վանաձորի համայնքի ղեկավարի 10 ապրիլի 2024 թվականի թիվ 895 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» թիվ 1304 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 19

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հուլիսի 2024 թվականի N 1647

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂ. 10 ՇԵՆՔԻ ԹԻՎ 21 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հերմինե Սարգսի Կարապետյանի և Վիգեն Իշխանի Նիկողոսյանի կողմից լիազորված անձ Սոնյա Իշխանի Նիկողոսյանի 18.09.2023 թվականի թիվ 02/16108 դիմումը, 30.08.2021 թվականի թիվ 2572 լիազորագիրը նոտարական ակտի կոդ: 741-20210830-79-5345646/ ,07.04.2022 թվականին տրված թիվ 1190 նոտարական ակտը, /նոտարական ակտի կոդ: 741-20220327-155-5786267/,07.04.2022 թվականի սեփականության իրավունքի թիվ 1191 վկայագիրը /նոտարական ակտի կոդ: 741-20220329-84-5790829/, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 1714646 վկայականը, 13.05.2003 թվականին տրված թիվ 18 ավարտական ակտը, 12.02 2001 թվականի Վանաձորի քաղաքապետի թիվ 92 որոշումը, 16.02.2001 թվականի թիվ 19 պայմանագիրը, «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորչի 10 շենք, թիվ 21 հասցեում գտնվող բնակարանի զբաղեցրած 0,00654 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2.Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորչի 10 շենք, թիվ 21 հասցեում գտնվող 45 քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2034 թվականի հուլիսի 6-ը:

3.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Հերմինե Սարգսի Կարապետյանի և Վիգեն Իշխանի Նիկողոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 45քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի չափը փոխելու և վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր, վարձավճարի չափը 45 քմ մակերեսով հողամասի համար սահմանելով ամսական 20 /քսան/ դրամ, [illegible] եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել [illegible] [illegible]:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. հուլիսի 19
ք.Վանաձոր